# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնք.
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գեղադիր, 4 փ. 4 շ., Հեռ. (094) 248414 ,
geghadir.kotayq@mta.gov.am

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

N 231
*14 դեկտեմբեր 2018թ.*

Հարգելի պարոն մարզպետ,

<<Տեղական ինքնակառավարման մասին>>օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի համաձայն Ձեզ է ուղարկվում Կոտայքի մարզի Գեղադիր համայնքի ավագանու 2018թվականի դեկտեմբերի 14-ի N 12 նիստի որոշումները:

Առդիր 13 թերթ:

Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

*Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Թ. Մուրոյան*
*Հեռ.077161037*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գեղադիր, (094) 248414, geghadir.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 դեկտեմբերի 2018թվականի N 40-Ա

## ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>>օրենքի 14-րդ հոդվածի դրույթներով՝համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել համայնքի ավագանու 2018թվականի դեկտեմբերի 14-ի հերթական նիստի օրակարգը.

1)Գեղադիր համայնքի ղեկավարի 2019թվականի վարձատրության չափը սահմանելու մասին

2)Գեղադիր համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին

3)<<Գեղադիր համայնքի մանկապարտեզ>>համայնքային ոչ առևտրային կազմակերպության 2019 թվականի աշխատողների քանակը,հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին

4)Գեղադիր համայնքի ավագանու նիստերի 2019թվականի ժամանակացույցը հաստատելու մասին

5)2019թվականի համար Գեղադիր համայնքում տեղական վճարների դրույքաչափերը և արտոնությունները սահմանելու մասին

6)2019թվականի համար Գեղադիր համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը սահմանելու մասին

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՀԱՐՈՆ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԱՄ

ՄԿՐՏՉՅԱՆ ՀԱՄԱՅԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գեղադիր, (094) 248414, geghadir.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

14 դեկտեմբերի 2018թվականի N 41-Ա

## ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>>օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի և 28-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1.Գեղադիր համայնքի ղեկավարի 2019 թվականի ամսական վարձատրության չափը սահմանել 260 000/երկու հարյուր վաթսուն հազար/ դրամ:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2019թվականի հունվարի 1-ից:
3.Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 2017թվականի դեկտեմբերի 12-ի<<Գեղադիր համայնքի ղեկավարի 2018թվականի վարձատրության չափը սահմանելու մասին>> N45-Ա որոշումը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՀԱՐՈՆ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԱՄ

ՄԿՐՏՉՅԱՆ ՀՄԱՅԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գեղադիր. (094) 248414, geghadir.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 դեկտեմբերի 2018թվականի N 42-Ա

### ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<<Տեղական ինքնակառավարման մասին>>օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի դրույթներով՝համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել Կոտայքի մարզի Գեղադիր համայնքապետարանի 2019 թվականի աշխատակազմի աշխատակիցների քանակը,հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2019թվականի հունվարի 1-ից:

3.Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 2017թվականի դեկտեմբերի 12-ի<<Գեղադիր համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը,հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>>N46-Ա որոշումը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՀԱՐՈՆ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԱՄ

ՄԿՐՏՉՅԱՆ ՀՄԱՅԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված
Գեղադիր համայնքի ավագանու 2018թվականի դեկտեմբերի
14-ի N 42-Ա որոշման

# ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ
## ԳԵՂԱԴԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2019Թ.

Աշխատակիցների թվաքանակը՝ 6

| Հ/հ | Կազմակերպության անվանումը | Հաստիքի անվանումը | Հաստիքի տեսակը | Պաշտոնի ծածկագիրը | հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը | Հավելումը | Հավելավճարը | Աշխատավարձի չափը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 1 | Համայնքապետարանի աշխատակազմ | Համայնքի ղեկավար | Քաղաքական | - | 1 | 260000 | | | 260000 |
| 2 | | Համայնքի ղեկավարի տեղակալ | Հայեցողական | - | 1 | 180000 | | | 180000 |
| 3 | | Աշխատակազմի քարտուղար | Համայնքային ծառայության | 1.2-1 | 1 | 165000 | | 16500 | 181500 |
| 4 | | Առաջատար մասնագետ | Համայնքային ծառայության | 3.1-1 | 1 | 160000 | | 16000 | 176000 |
| 5 | | 1-ին կարգի մասնագետ | Համայնքային ծառայության | 3.2-1 | 1 | 100000 | | 10000 | 110000 |
| 6 | | Հավաքարար | Տեխնիկական սպասարկման | - | 1 | 72800 | | | 72800 |
| | | 6 | | | 6 | 937800 | | 42500 | 980300 |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գեղադիր, (094) 248414, geghadir.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 դեկտեմբերի 2018թվականի N 43-Ա

<<ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>>ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ 2019ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>>օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի՝համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել<<Գեղադիր համայնքի մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության 2019թվականի աշխատողների քանակը,հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2019թվականի հունվարի 1-ին:

3.Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 2017թվականի սեպտեմբերի 7-ի<<Գեղադիր համայնքի մանկապարտեզ ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը,աշխատողների քանակը,հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>>N32-Ա որոշման 1-ին կետի <<Հաստատել՝ Աշխատողների քանակը,հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝համաձայն հավելված N 2-ի>> 3) ենթակետը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՀԱՐՈՆ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԱՄ

ՄԿՐՏՉՅԱՆ ՀԱՄԱՅԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված

Գեղադիր համայնքի ավագանու 2018թ.դեկտեմբերի 14-ի N43-Ա որոշման

Աշխատակիցների թվաքանակը՝ 13

| Հ/հ | Կազմակերպությանանվ անումը | Հաստիքանվ անումը | Հաստիքիտեսակը | հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը | Աշխատավարձի չափը |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 6 | 7 | 10 |
| 1 | <<Գեղադիրի մանկապարտեզ>> ՀՈԱԿ | Տնօրեն | Վարչական | 1 | 120000 | 120000 |
| 2 | | Մեթոդիստ,ուսումնական գծով տեղակալ | քաղաքացիական | 0.5 | 36500 | 36500 |
| 3 | | Հաշվապահ | Քաղաքացիական | 1 | 73000 | 73000 |
| 4 | | Դաստիարակ | Քաղաքացիական | 2 | 89000 | 178000 |
| 5 | | Երաժիշտ | Քաղաքացիական | 0.5 | 36500 | 36500 |
| 6 | | Բուժքույր | Քաղաքացիական | 0.5 | 36500 | 36500 |
| 7 | | Խոհարար | Տեխնիկականսպասարկման | 1 | 73000 | 73000 |
| 8 | | Խոհարարի օգնական | Տեխնիկականսպասարկման | 1 | 73000 | 73000 |
| 9 | | Գիշեր. Պահակ-բակապան | Տեխնիկականսպասարկման | 1 | 73000 | 73000 |
| 10 | | Դաստիարակի օգնական | Տեխնիկական սպասարկման | 2 | 73000 | 146000 |
| 11 | | հավաքարար | Տեխնիկական սպասարկման | 0.5 | 36500 | 36500 |
| | Ընդամենը | 13 | | 11 | 720 000 | 882 000 |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գեղադիր, (094) 248414, geghadir.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 դեկտեմբերի 2018թվականի N 44-Ա

## ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019ԹՎԱԿԱՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<<Տեղական ինքնակառավարման մասին>>օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ , 3-րդ",4-րդ մասերի դրույթներով՝համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել Գեղադիր համայնքի ավագանու 2019թվականի նիստերի ժամանակացույցը համաձայն հավելվածի:
2.Անհրաժեշտության դեպքում անցկացնել արտահերթ նիստեր:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2019թվականի հունվարի 1-ին:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՀԱՐՈՆ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԱՄ

ՄԿՐՏՉՅԱՆ ՀՄԱՅԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված
Գեղադիր համայնքի ավագանու 2018թ
դեկտեմբերի 14-ին N 44 -Ա որոշման

## Գեղադիր համայնքի2019թ. ավագանու նիստերի ժամանակացույց

| Ամիսը | Համայնքի ավագանու նիստի օրը | Համայնքի ավագանու նիստի օրակարգային հարցեր | |
|---|---|---|---|
| Հունվար | 15-ին | Համայնքի բյուջեի 2018թվականի 4-րդ եռ. կատարման ընթացքի մասին հաղորդում | |
| | | Համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերի հաստատման մասին | |
| | | Համայնքի ղեկավարի կողմից կամավոր խնդիրների իրականացման կարգի և անհրաժեշտ ֆինանսական միջոցների մասին | |
| մարտ | 12-ին | Համայնքի 2018թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվություն | |
| Ապրիլ | 12-ին | Համայնքի 2019թվականի բյուջեի 1-ին եռ. կատարման ընթացքի մասին հաղորդում | |
| Հունիս | 11-ին | Համաձայնություն հողային հաշվեկշռին | |
| Հուլիս | 15-ին | Բյուջեի 2-րդ եռ. կատարման ընթացքի մասին հաղորդում | |
| սեպտեմբեր | 9-ին | Համայնքի հնգամյա զարգացման ծրագրի շրջանակներում համայնքի տարածական զարգացման ուղղությամբ օրենքով վերապահված լիզորությունների իրականացման մասին | |
| Հոկտեմբեր | 15-ին | Համայնքի բյուջեի 3-րդ եռ. կատարման ընթացքի մասին հաղորդում | |
| Դեկտեմբեր | 13-ին | Տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի սահմանման մասին | |
| | | Համայնքի ղեկավարի 2020թվականի վարձատրության չափի մասին | |
| | | Համայնքի ղեկավարի աշխատակազմի և բյուջետային հիմնարկների աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի հաստատման մասին | |
| | | Հաջորդ տարվա բյուջեի հաստատում | |
| | | Համայնքի համայնքի 2020թ. ավագանու նիստերի ժամանակացույցը հաստատելու մասին | |

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գեղադիր, (094) 248414, geghadir.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 դեկտեմբերի 2018թվականի N 45-Ն

## 2019ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ԵՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<<Տեղական ինքնակառավարման մասին>>օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի,<<Աղբահանության և սանիտարական մաքրության մասին>> օրենքի ,<<Տեղական տուրքերի և վճարների մասին >>օրենքի 8-րդ , 10-րդ,13-րդ,14-րդ հոդվածների՝համայնքի ավագանին որոշում է.

2019թվականի համար Գեղադիր համայնքում/այսուհետ համայնքում/ սահմանել տեղական վճարների դրույքաչափերը և արտոնությունները:)համայնքի տարածքում շենքի և շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝համայնքի մատուցած ծառայությունների փոխհատուցման վճար 10 000(տաս հազար ) դրամ.
2)Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող,բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների/այդ թվում դրանց վերակառուցումը,վերականգնումը,ուժեղացումը,արդիականացումը,ընդլայնումն ու բարեկարգումը/կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝10 000/տաս հազար դրամ.
3) Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝10 000/տաս հազար դրամ.
4)համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝10 000/տաս հազար դրամ.
5)համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ

փաստաթղթի համար փոխհատուցման վճար՝1000 /հազար/ դրամ:
6)համայնքն սպասարկող անասնաբույժի ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար 10 000/ տաս հազար/ դրամ:
7) համայնքում աղբահանության դիմաց գանձվող տեղական վճարի դրույքաչափերը՝համաձայն հավելված 1-ի.
8)համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար և արտոնություններ համաաձայն հավելվածի 2-ի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՀԱՐՈՆ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԱՄ

ՄԿՐՏՉՅԱՆ ՀՄԱՅԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 1
Գեղադիր համայնքի ավագանու 2018թվականի
դեկտեմբերի 14-ի N 45-Ն որոշման

## ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

1)կենցաղային աղբի համար `ըստ հաշվառված անձանց քանակի`համայնքում անձն ագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և /կամ/բնակվող յուրաքանչյուր բնակչի համար` ամսական 150 /հարյուր հիսուն/ դրամ
2)ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար ըստ ծավալի`մեկ խորանարդ մետր աղբի համար 3000/ երեք հազար/ դրամ,ըստ զանգվածի` մեկ տոննա աղբի համար` 10000/տաս հազար/ դրամ:
2.Սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով նախատեսված աղբի ծավալը կամ զանգվածը որոշելու (պարզելու) անհնարինության դեպքում,այդ թվում տեխնիկական, աղբահանության վճարի հաշվարկը կատարվում է հետևյալ ամսական դրույքաչափերով`
1)առևտրի /այդ թվում շուկաների/, հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ` մեկ քառ մետրը 50 /հիսուն/դրամ
2)հյուրանոցներ և հյուրանոցային ծառայություններ իրականացնող օբյեկտներ՝ մեկ քառ. մետրը 20/քսան/ դրամ
3)արտադրական,արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինություններ՝ մեկ քառ. մետրը 5 /հինգ/դրամ
4)կրթական մշակութային,առողջապահական.սպորտային,գիտահետազոտական շինություններ՝ մեկ քառ.մետրը 3/երեք/ դրամ:
5)Համայնքի վարչական տարածքում շինարարական և խոշոր եզրաչափի մեկ խորանարդ մետր աղբի հավաքման և փոխադրման թույլտվության համար տեղական վճար սահմանել 600/վեց հարյուր /դրամ:

Հավելված N 2
Գեղադիր համայնքի ավագանու 2018թվականի
դեկտեմբերի 14-ի N 45-Ն որոշման

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՕԳՏՎՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԳՈՒՄԱՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ԵՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

1. «Գեղադիր համայնքի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի դրույքաչափը 2019 թվականի համար սահմանել 5 000 (հինգ հազար) դրամ:

3. Մանկապարտեզների ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի 100 %-ի չափով նվազեցման արտոնություն սահմանել՝

1) Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության ժամանակ զոհված կամ հաշմանդամ դարձած զինծառայողների երեխաների համար,

2) երկկողմանի ծնողազուրկ երեխաների համար:

4. Մանկապարտեզների ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի 50 %-ի չափով նվազեցման արտոնություն սահմանել՝

1) միակողմանի ծնողազուրկ (մահացած ծնող ունեցող) երեխաների համար,

2) 1-ին և 2-րդ կարգի հաշմանդամ ծնող ունեցող երեխաների համար,

3) երեք և ավելի անչափահաս երեխա ունեցող ընտանիքի երեխաների համար,

4) հաշմանդամ երեխաների համար:

5. Իրավունք վերապահել համայնքի ղեկավարին համայնքի կողմից մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի համար կիրառելու 50-ից 100 տոկոսի չափով նվազեցման արտոնություն՝ ավագանու կողմից սահմանված կարգին, պայմաններին և չափորոշիչներին համապատասխան:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գեղադիր, (094) 248414, geghadir.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 դեկտեմբերի 2018թվականի N 46-Ն

### 2019ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<<Տեղական ինքնակառավարման մասին>>օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1.Սահմանել Գեղադիր համայնքի վարչական տարածքում նոր հասցեների տրամադրման ծառայության վճար՝ 5 000/հինգ հազար/դրամ.

2.Սահմանել համայնքի վարչական տարածքում գտնվող անշարժ գույքի գործառնական նշանակության փոփոխության ծառայության վճար՝ 20 000/ քսան հազար/դրամ:

3.Սահմանել համայնքապետարանի աշխատակազմի կողմից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար ծառայության վճար՝ 500 /հինգ հարյուր/դրամ:

4.Սահմանել Գեղադիր համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքի օտարման և օգտագործման տրամադրման փաստաթղթերի կազմման համար ծառայության վճար՝ 10 000/տաս հազար/ դրամ:

5.Սահմանել համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառույցների օրինականացման ծառայության վճար՝5 000/հինգ հազար/դրամ:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՀԱՐՈՆ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԱՄ

ՄԿՐՏՉՅԱՆ ՀԱՄԱՅԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ